

### ԱԿՏԻՐՈՒԱԾ ԴՐԱՆՍՏԻ ՄՇԱԿՈՑԹԻ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԸ

Ջետպատերազմեան տարիներին շինարարները Բաքում գերմանացի ուղղակիներն էին: Մեզ՝ դեռահասներին համար նրանք թշմասի-ֆաշիստներ չէին, այլ հիծուած, սովալլուկ մարդիկ, բոլորն էլ նոյն տեսքով, և մենք նրանց հետ կիսում էինք մեր դպրոցական նախաճաշը՝ կծուահամ սառը փքաբլիթները: Երբեմն էլ կանգնում ու նալում էինք, թէ ինչպէս էին նրանք ինչ-որ դժոխային սղոցով կտրում քանդակազարդ սալիկները: Տարիներ անց, երբ տեսայ հայկական խաչքարերը, հասկացայ, որ Բաքուի կառավարական տունը կառուցուել է դրանց վրայ, և որ մեր յիշողութիւնը, այդ անգուգական քարապատկերների մեծն, փորձել են ոչնչացնել:

Սորբոնում Գանձասարի վանքը համարել են հայ ճարտարապետութեան հինգ գլուխգործոցներից մէկը: Ա՛յ՛ Գեղարուել է համաշխարհային մշակույթի ոսկէ ֆոնդի մէջ, մինչդեռ Բաքում այդ ա՛նունձ անգամ արտասուանել արգելված էր: Եւ եթէ Բաքուի ղեկավարութիւնն այստեղ էր ժամանում, ապա միայն հարբեցողութեան և թիրախներին կրակելու համար: Իսկ թիրախները վանքի անկրկնելի հարթաքանդակներն էին:

Հայ մշակոյթի պաշտպանները սակաւաթիւ էին, որոնց ազգայնականի պիտակով արքայութեան էին Սիբիր: Լաւազոյն դէպքում՝ վտարում էին Ադրբեջանից: Մոսկուան պաշտպանում էր Բաքուի քաղաքականութիւնը, և Ղարաբաղի հարուստ մշակույթը ոչնչացում էր թէ՛ ֆիզիկապէս, թէ՛ պարզապէս անտեսելով:

Սակայն երբ փոքրիկ Ղարաբաղում սկսուեցին ազատագրական շարժումները, անդորրը վողովուեց: Ղարաբաղցիների անձնուիրութիւնը, նրանց ճակատագրի ողբերգականութիւնը այստեղ բերեց Ռուսաստանի, Եվրոպայի և Ամերիկայի թղթակիցներին: Եւ եթէ նրանք գալիս էին Ղարաբաղին օգնելու կամ աշխարհին տեղեակ պահելու կատարուածի մասին, ապա Բորիս Բարաթովը եկել էր, որ... փրկի մշակույթը:

Բնիկ մոսկուացի, կինոբեմադրիչ, նկարիչ, աշխարհի կէտը ոտքի տուած Բորիս Բարաթովը մինչև ուղևուծուծը նուիրուեց Ղարաբաղին:

«Այն, ինչ կատարում է այդ հինաուրց, բիբլիական հողում և Ղարաբաղի յուշարձանների հետ, ցեղասպանութիւն է: Մենք պարտաւոր ենք փրկել այդ անգին գանձը», – ասաց և զնդակների ու արկերի տարափի տակ սկսեց լուսանկարել Ղարաբաղի եկեղեցիները, վանքերը, խաչքարերը, բնապատկերները, դարաւոր ծառերը, ծերերին ու մանկանց:

1992 թուականին լոյս տեսա նրա «Արցախի հրեշտակը» գիրքը, որի լուսանկարները խորապէս յուզիչ էին և ճանապարհի էին կոչում: Խոր և յափշտակիչ պատումը թեւածու է ժամանակի և տարածութեան մէջ. Խորենացուց և Գանձակեցուց մինչև Ռաֆֆի և Օրբէլի, Գօշի «Դատաստանագրքից» մինչև «Մարդու իրաւունքների հռչակագիր», իսկ բանահիւսութեանն անպատկերելիորէն յաջորդում են ոռու մեծ գորավար Ալեքանդր Սուվորովի «Կովկասեան գրաւումները» կամ Օւոչիի բերրի պարէտ Ռեւուտի գեկուցագիրը՝ ուղղուած գեներալ Պասկևիչին:

1998 թուականին լոյս տեսա Բորիս Բարաթովի երկրորդ՝ «Աւերուած դրախտ. Ժամապարհորդութիւն Ղարաբաղ» գիրքը: Առաջինի հետ այն երկգրութիւն է կազմում: Գրքի բնաքանը Եղիշէ Չարենցի տողերն են.

Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արիւնքաւ պլքքերը մեր,

Էլի ես որք ու արնավառ իմ Հայաստան եարն եմ սիրում:

Իրօք, պիտի անմնացորդ սիրես նախնեացդ հողը՝ քայլելու համար ականապատ լեռներով՝ բացայայտելով վաղուց մոռացումս կեցութեան գաղտնիքները: Հողում թաղումս սիւներ՝ հին խոյակներով և հայերէն արձանագրութեամբ՝ «Ես, Աբբա, տիրակալ...», զանգումով քարէ միակտուր շրջանակ. որ յիշեցնում է Ղարաբաղի հիւսիսում գտնուող Մելիք Քեզլարեանների կամարակապ պալատի պատուհանը. այսպէս, քայլ առ քայլ պեղուել են իշխանական պալատի աներակները Վերին Խաչէնի իշխանների նստավայր Ծարում:

«Ես ինձ հետ տանում էի պատրանքի նմանող, լեռների սպիտակ գագաթներով գօտևորումս կանաչ սարահարթի տեսիլքը, որն իր խորքերում պալատներ և տաճարներ էր թաքցնում.»- կարդում են և ի պատասխան աղօթքի նման ինչ-որ բան են մրմնջում. «Աստուած՝ իմ, եթէ Ղարաբաղը բարեկարգումս լինէր, զբօսաշրջիկութեան ինչպիսի՞ դրախտ կդառնար»:

Հեղինակի և ընթերցողների համար յայտնութիւն է Քելբաջարի և Լաչինի յուշարձանների ուսումնասիրութիւնը, որը հաստատում է հին ճշմարտութիւնը՝ այդ հողը բնիկ հայկական է: Երեք հարիւր տարի առաջ շահ Աբասը հայերին Պարսկաստան քշեց, իսկ նրանց հողում բնակեցրեց քրդերին, որպէսզի Ղարաբաղը կտրի Հայաստանից:

Իրատեսակ յայտնութիւն են նաև Արզու-Խաթուն Արծրունի իշխանուհու կառուցած եկեղեցու որմնանկարները: Ես դրանք տեսել էի 70-ականների սկզբին, երբ աղբբեջանական երկրաբանները եկեղեցում պայթուցիկ միջոց էին պահում: Պատերից մէկն ամբողջությամբ ծածկումս էր, իսկ միւսի վրայ՝ փոշու հաստ շերտի տակից երևում էին Աւետման դիտիչ զոյները: Բորիս Բարաթովը եղել է հնոտիքից արդէն մաքրումս եկեղեցում, և մեր մեկնութիւնները տարբեր են, ինչն էլ վկայում է, որ գրեթէ մէկդարեայ մոռացութիւնից փրկումս ճարտարապետական գլուխգործոցները կարօտ են լուրջ ուսումնասիրման:

Վաղ քրիստոնէական ինքնատիպ տաճարները, անձաւային գրադարանները, գրչատները, ուր աշխատում էին գրիչներն ու ծաղկողները, հնձանները, քարակերտ աղբիւրները, բարեբեր բնութիւնը, խաչքարերի անվերջանալի շարքերը, հին պատմութիւնն ու ժամանակակից կեանքը, և, իհարկէ, ղարաբաղցիների բացարտութիւնը՝ այս ամէնն իր արտացոլումսն է գտել գրքում:

Յուշարձանների նկարագրութիւնն անկաշկանդ միահիւսումս է կերպարներին և դիմանկարներին: Այսպէս, Յուշին յիշողութեան մէջ կենդանացնում է հանրայայտ քանդակագործ Գիւրջեանի, իսկ Դպղիվանքը՝ արուեստաշնորհ Արզու-Խաթուն Արծրունու կերպարները: Իսկ Խոյափերիճի հին կամուրջներով հասնում ես Ղարաբաղի վաճառականներին, որոնց մասին XVIII դարի վերջին էմանուէլ Կանտը գրել է.

«Հայերը իւրայատուկ անուրական ոգի ունեն, այսինքն՝ նրանք ասորանքափոխանակութեամբ են զբաղում՝ ոտքով ճանապարհորդելով Զինաստանի սահմաններից մինչև Գվինեայի արևի Կորսո հրուանդանը. դա ցոյց է տալիս այդ խելացի և աշխատասէր ժողովրդի իւրայատուկ ծագումը, որը հիւսիս-արևելքից մինչև հարաւ-արևմուտք անցնում է գրեթէ ողջ Հին Աշխարհով և շերտ հիւրընկալութիւն է գտնում բոլոր այն ժողովուրդների կողմից, ում մօտ լինում է»:

Հեղինակը մեքքերում է Ղարաբաղի յայտնի Տող գիւղի՝ պատմաբան Առաքել Կոստանեանցի նկարագրութիւնը. «Տող բերդաքաղաքը հնում, պարսից թագաւորի մարդահամարի համաձայն, ունէր հազար հինգ հարիւր տուն: Բնակիչները բավականաչափ հարուստ էին, թանկարժէք շատ իրեր ունէին, զբաղում էին

առևտրով: Նրանք զանազան երկրներ և քաղաքներ էին գնում և շահաւէտ առևտուր էին անում: Նրանց տներն ու կացարանները զարդարուած էին թանկարժէք զանձներով: Քաղաքը ձիարշաւարան ունէր, ուր զօրախաղեր ու ձիարշաւ էին կազմակերպում: Այստեղ կարելի էր համտեսել համեղ անարատ զիգիներ և քաղցրահամ մրգեր, ինչպէս նաև մաքուր մետաքս գնել: «Ղարաբաղեան շուրհակուհիների գործած մետաքսը,– Կոստանճեանցի շարունակում է հեղինակը,– հաւանաբար, իսկապէս որակեալ էր: 1883 թուականին Հաղորութի գիղի մետաքսը Ամերիկայի միջազգային տօնավաճառում ոսկէ մեդալ շահեց: Այդ մետաքսից XX դարի սկզբին վարագոյրներ պատրաստեցին Ելիսէեան պալատի համար»:

Իսկ իմ յիշողութեան մէջ յառնում են վաղ մանկութեանս պատկերները, երբ ինձ հրճուանք էր պատճառում աւագ մօրաքրոջս գործած արևային վառ գոյներով մետաքսը, որի համար նա պարգևատրուեց Մոսկուայի և Լեւինգրադի ուղեգրով:

Իսկ Բաքուի տիրակալները 30 տարում ոչնչացրին Ղարաբաղի հին արուեստը, և եթէ ղարաբաղցիները տոկունութիւն չդրսկորէին, այդ տիրակալները կոչնչացնէին նաև Ղարաբաղի հայտնի թթենու պուրակները, ինչը արեցին 20 տարի անց խաղողի այգիների հետ: Նոյնիսկ փորձեցին բամբակ անեցնել, բայց չստացուեց: Բամբակը լեռներում չաճեց: Հեղինակն իր հետ ճանապարհորդելու է վերցրել Ղարաբաղի մասին պատմիչների երկերը, և երկխօսութիւնը նրանց հետ բնագրին ծաւալ և խորութիւն է տալիս: Պատումի հարթ, էպիկական հանգստութիւն ունեցող թաղանթը ընդմիջում է ժամանակագրական ներդիրներով:

«1876 թուականն էր: Բաքուի 41 տարեկան էր, հայոց այբուբէնը՝ 1400 տարեկան: Բանաստեղծ և երաժիշտ Սայեաթ-Նովային Ալլա Մահմադ-խանի զինուորները սրախողխող էին արել Տ1 տարի առաջ: Գրողներ և բանաստեղծներ Գրիգոր Զօհրապին, Դանիէլ Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբէն Սևակին, Ռուբէն Զարդարեանին թուրքերը գազանաբար կյօշոտեն Կոտանդնապոլսում 39 տարի յետոյ: Բանաստեղծ Եղիշէ Զարեանցին Երևանի բանտում խեղդամահ կանեն 61 տարի յետոյ: Խարոյկները Սումգայիթում կրոցկլտան 112 տարի յետոյ»:

Այսպիսին է Բարաթովի պայծառ գրքի ողբերգական ռիթմը: Ցաւալի է, որ գիրքը լոյս է տեսել փոքր տպաքանակով (500 օրինակ): Ղարաբաղին կապուած իրաքանչիւր տուն այն պէտք է ունենայ, իսկ այդպիսիք շատ-շատ են:

Ցաւօք, «Արցախի հրեշտակը» և «Աւերուած դրախտ» գրքերը մինչև այժմ հայերէն չեն թարգմանուել:

Մօտենում է Քրիստոսի ծննդեան 2000 և Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700 ամեակը: Հազարաւոր սփիւոքսահայեր ժամանելու են Հայաստան, և Բարաթովի գրքերը նրանց համար անգնահատելի նուէր կարող են լինել: Դրանք կարող են նպաստել աշխարհասփիւռ հայութեան հոգևոր միասնութեանը:

ԳՐԷՏԱ ԿԱԳՐԱՄԱՆՈՎԱ

Մոսկուայի Գրողների միութեան անդամ